Եւ յետ կարգաւորելոյ Գրիգորի զամենայն գործս իւր՝ եկ 'ի Կոստանդինուպոլսոյ, և ճանապարհ արար յԵրուսաղէմ. և հասեալ 'ի Բերիա քաղաք՝ այն է Հալէպ, մնաց անդ աւուրս ինչ՝ զնեաց կալուածս 'ի նպաստ Ս. Աթոռոյն. նորոգեաց զհնացեալ և զաւիրեալ Հոգեւորունն 'ի պէտս ուխտաւորաց՝ 'ի թաղն կոչեցեալ Սալիպա, զոր կառուցեալ էր Գրիգոր Պատրիարք Պարոն Տէր 'ի ժամանակի իւրում, և զարդարեալ պայծառացոյց սենեկօք և խցովք և այլ կարեւոր պիտոյիւք՝ ձեռնտուութեամբ վաճառականացն Հայոց եղելոց անդ, և զկնի 5 ամաց ետ դնել արձանագիր յորմն 'ի դաւթի անդ գրեալ 'ի թուին Հայոց 1175 (1726).

Եւ ելեալ անտի եկն յԵրուսաղէմ բազմութեամբ ուխտաւորաց յամի Տեառն 1721 'ի 12 Փետրվար ամսոյ, որոյ ընդ առաջ ելին միաբանք վանաց, քրիստոնեայք եւ այլազգիք քաղաքին. զի բազմիցս լուեալ էին զբարի համբաւ նորին, եւ անձկային եւս տեսանել զնա։ Եւ եմուտ Գրիգոր շքեղ հանդիսիւ և մեծաւ փառօք 'ի քաղաքն, և նստաւ յԱթոռ Պատրիարքութեան Երուսաղէմի. և ձեռն արկ բարեկարգել և նորոգել զվանօրայս, եւ զկրօնաւորս վանական կարգօք, և հետզհետէ վճարել զպարտսն և ազատել զկալուածսն 'ի Յոպպէ, 'ի Ռեմլէ եւ յԵրուսաղէմ. նոյնպէս զկահ և զկարասիս վանաց և զեկեղեցական ընտիր ընտիր անօթս և զսպասս, զորս յառաջագոյն աշխարհական տեղակալք եղեալ էին 'ի գրաւի։ Եւ ապա կարգեաց առանձին տումար յեկեղեցին վասն եկեղեցական զարդուց. և ինքն սկիզբն արար գրել զայն, ուր ինքն ասէ. «Գրող այսմ տումարիս Ամիրտոլցի Գրիգոր մեղապարտ վարդապետս». և այսպէս մինչ 'ի վախճան իւր գրեաց զայս տումար, զոր միանգամ ետուն եւ յաւելին 'ի գանձ Տեառն միաբանք և օրհնեալ ազգս Հայոց, և զորս միանգամ ինքն ետ չինել. 'ի վախճանի պատուիրէ խստիւ բոլոր միաբանաց՝ և մանաւանդ լուսարար և կամ փակակալ վարդապետին, ընդ հսկողութեամբ որոյ են եկեղեցական անօթք, զգուշութեամբ պահել և պահպանել, զի մի կրկին անկցի 'ի ձեռս աներկիւղ արանց, թէ միաբան խցէ և թէ եկամուտ ոք, եւ ցրուեալ կորուսցեն, զորս բազում նեղութեամբ և աշխատութեամբ ժողովեալ էր։ Եւ ինքն սկիզբն